ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հունվարի 31-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 25-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ. Դավթյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

1. ԼՍԵՑԻՆ. ՀՀ Արդարադատության նախարարության հեռանկարային զարգացման և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հետ համագործակցության մասին հաղորդում (ՀՀ Արդարադատության նախարար Հ. Թովմասյան):

Հ. Թովմասյանը խոսեց նախարարության գործունեության առջև ծառացած խնդիրների, դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված և ձեռնարկվելիք միջոցների մասին, ինչպես նաև այդ համատեքստում իրավագիտության ֆակուլտետի հետ հնարավոր համագործակցության հեռանկարների մասին:

2. ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաղորդումը ուսումնական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Ա. Վաղարշյան):

Հաշվետվությունը կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Իսկոյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, իսկ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կատարված աշխատանքը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի մասին (զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ) :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ամբիոնների վարիչները գրեթե միաձայն հայտնեցին, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման աշխատանքները դանդաղ են ընթանում, չնայած, որ և՝ գիտական ղեկավարները, և՝ ամբիոնների վարիչները անընդհատ հորդորում են աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Նշվեց, որ աշխատանքները ղեկավարների դրական կարծիքներով ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել մարտի 31-ը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Տ.Բարսեղյանը, Ն.Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ. 2010-11 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների նախապատրաստման վիճակի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն և հանձնարարել ամբիոններին ներկայացնել աշխատանքների հետագա ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ:

4. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին (զեկուցող՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):

Հ. Խաչիկյանը ներկայացրեց քննաշրջանի արդյունքները: Քննաշրջանի ավարտից հետո ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը բակալավրիատում կազմել է 43 տոկոս:

Առաջին կուրսում առաջադիմությունը կազմել է 33 տոկոս, 156 ուսանողներից 29-ը ստացել է 13 և բարձր միավորներ, 7-ը՝ 18 և բարձր միավորներ:

Երկրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 41 տոկոս, 147 ուսանողներից 36-ը ստացել է 13 և բարձր միավորներ, 4-ը՝ 18 և բարձր միավորներ:

Երրոդ կուրսում առաջադիմությունը կազմել է 37 տոկոս, 146 ուսանողներից 24-ը ստացել է գերազանց և լավ, իսկ 8-ը՝ 18 և բարձր գնահատականներ :

Չորրորդ կուրսում առաջադիմությունը կազմել է 34 տոկոս, 187 ուսանողներից 23-ը ստացել է գերազանց, 46-ը՝ գերազանց և լավ գնահատականներ:

Մագիստրատուրայում առաջադիմությունը 1-ին տարում կազմել է 94, երկրորդում՝ 93 տոկոս: Պարտք են ունեցել 2 մագիստրանտ առաջին կուրսից:

4.1. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը մագիստրատուրայի 1-ին կուրսում դասավանդվող «Քրեաիրավական քաղաքականության արդի միտումները Եվրոպայում» կամընտրական դասընթացը «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» դասընթացով փոխարինելու մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Գաբուզյանը, Ա. Մարգարյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսում դասավանդվող «Քրեաիրավական քաղաքականության արդի միտումները Եվրոպայում» կամընտրական դասընթացը փոխարինել «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» դասընթացով,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.2. ԼՍԵՑԻՆ. Սահմադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Գնել Մուղնեցյանի թեկնածուական ատենախոսության վերտառության փոփոխման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Մուրադյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ Սահմադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Գնել Մուղնեցյանի թեկնածուական ատենախոսության նախկինում հաստատված թեման «Վարչական արդարադատության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերաաձևակերպել հետևյալ վերտառությամբ. «Վարչական դատավարության ընթացակարգային առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.3. ԼՍԵՑԻՆ. Սահմադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անահիտ Մանասյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Մուրադյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Անահիտ Մանասյանի «ՀՀ ՍԴ որոշումների դերը երկրում սահմանադրականության զարգացման գործում» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

բ/ Անահիտ Մանասյանի գիտական ղեկավար նշանակել ի.գ.դ., պրոֆ. Գ. Հարությունյանին,

գ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.4. ԼՍԵՑԻՆ. Սահմադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Ավետիք Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ն. Այվազյանը, Ս. Մուրադյանը, Գ. Ղազինյանը, Տ. Դավթյանը :

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաստատել Ավետիք Հարությունյանի «ԼՂՀ Սահմանադրության արժեբանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսության թեման, բնագավառը՝ հումանիտար գիտություններ, մասնագիտությունը՝ իրավագիտություն, շիֆրը ԺԲ. 00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատել իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

4.5. ԼՍԵՑԻՆ. 2010-2011 ուս. տարվա համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Հ. Խաչիկյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը, իրավագիտության ֆակուլտետի խորհուրդը որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ երաշխավորում է հետևյալ ուսանողներին.

1. Տաթևիկ Սուջյան (մագիստրատուրա 1-ին տարի)՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի սահմանած Վ. Ներսեսյանցի անվանական կրթաթոշակ,
2. Արսեն Թավադյան (մագիստրատուրա 2-րդ տարի)՝ Մխիթար Գոշի անվան կրթաթոշակ,
3. Նարինե Բաբայան (4-րդ կուրս)՝ Գրիգոր Զոհրապի անվան կրթաթոշակ:

4.6. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ բակալավրիատում դասավանդվող «Իրավաբանի մասնագիտական հքտությունների դասավանդման հիմնահարցեր» դասընթացը վերանվանելու և այն մագիստրատուրայի 1-ին կուրս տեղափոխելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյան, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բավարարել քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և «Իրավաբանի մասնագիտական հմտությունների դասավանդման

հիմնահարցեր» դասընթացը վերանվանել «Իրավաբանի մասնագիտական հմտություններ» և այն տեղափոխել մագիստրատուրայի 1-ին կուրս, իսկ դրա փոխարեն «Օպերատիվ հետախուզական գործունեությունը ՀՀ-ում» դասընթացը տեղափոխել բակալավրիատի 3-րդ կուրս:

4.7. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ բակալավրիատում դասավանդվող «ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները» դասընթացի անվանման և ծրագրի փոփոխման մասին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ս. Դիլբանդյանը, Ա. Գաբուզյանը, Տ. Դավթյանը, Գ. Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բավարարել քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և բակալավրիատում դասավանդվող «ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները» դասընթաց վերանվանել «ՀՀ արդարադատության համակարգը» և ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները» դասընթացի ծրագիրը համապատասխանեցնել նրա բովանդակությանը:

Խորհրդի նախագահ *Գ. Ղազինյան*

Խորհրդի քարտուղար *Տ. Դավթյան*